

## Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց Հայաստան



# ՏԵՂԵԿԱԹԵՐԹ #07

Հունիս 2018

Երևան, Հայաստան



# Բովանդակություն

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ.....	3
Մանրի վերամշակում .....	3
Տեքստիլ արտադրություն .....	5
Շինարարություն .....	8
R&D .....	10
Տեղեկատվական տեխնոլոգիաներ .....	11
Կոսմետիկա .....	13
Դեղագործություն .....	14
Այլ ոլորտներ .....	16
Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ.	20
Եվրոպական նորություններ և միջոցառումներ.....	22

# Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ

Հայաստանյան ՓՄՁ-ների միջազգային գործարարության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու նպատակով ՁԵՅ Հայաստանը ուշադրությանն է ներկայացնում գործարար համագործակցության հետևյալ առաջարկները.

## Մննդի վերամշակում



### Գործարար համագործակցության առաջարկներ

**Ձեռագործ ավանդական մակարոնեղենի ոլորտում մասնագիտացած ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ և գործակալներ:**

Իտալական ընկերությունը Գրագնանո քաղաքից, որը գտնվում է Կամպանիայի տարածաշրջանում (Հարավային Իտալիա), փնտրում է դիստրիբյուտորներ և գործակալներ: Մակարոնեղենը բարձրորակ, ավանդական արտադրանք է, որը ստացվում է միայն կարծր ցորենի շատ մանր աղացված ձավարից և հասանելի է տարբեր ձևերով և տեսակներով: Բոլոր ապրանքները սերտիֆիկացված են. «Պաշտպանված աշխարհագրական նշում» (PGI).

Ծածկագիր. BOIT20170703002

**Խորտիկներ արտադրող ռուսական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ**

Ռուսական ընկերությունը, որն արտադրում է խորտիկներ (աղացած արևածաղկի սերմեր, գետնանուշ, չորահաց, և այլն), փնտրում է առևտրային գործընկերներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BORU20180222001

**Ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներ արտադրող սլովենական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ**

Մլովենական ընկերությունը, որը մասնագիտացած է ալկոհոլի, լիկյորների, մրգային օշարակների և արոմատացված գինիների արտադրության ոլորտում, փնտրում է դիստրիբյուտորներ՝ իր արտադրանքն օտար երկրներում տարածելու նպատակով:

**Ծածկագիր. BOSI20180605001**

### **Ընկերությունը Պերուից փնտրում է դիստրիբյուտորներ Եվրոպայում**

Ընկերությունը Պերուից արտադրում է յուրահատուկ սնունդ, որի հումքը ստացվում է հայրենի համայնքներից, ֆերմաների պարարտ և բերքատու հողերից: Ընկերությունն արտադրում է ջրազրկված ջեմեր, օշարակներ, փոշիներ և նեկտարներ: Ավելին, արտադրամասն ունի HACCP (Վտանգի վերլուծություն և կրիտիկական կետերի վերահսկում) անվտանգության սերտիֆիկատ: Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ Եվրոպայում, ովքեր փնտրում են նոր և էկզոտիկ համեմունքներ ու առողջարար բաղադրիչներ:

**Ծածկագիր. BOPE20180511001**

### **Ալկոհոլային խմիչքներ արտադրող բելգիական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ**

Նոր տեսակի ալկոհոլային խմիչք (15% alc/vol) արտադրող բելգիական ընկերությունն արտադրում է ալկոհոլային խմիչք՝ պատրաստված ամբողջովին հասուն և գաղտնի խոտաբույսերից: Այն փնտրում է տարածման ծառայությունների համաձայնագրեր:

**Ծածկագիր. BOBE20170308002**

## **Գործարար համագործակցության հարցումներ**

### **Գերմանական ընկերությունը փնտրում է մսի, խոզապուխտի, պանրի մակարոնեղենի եվրոպական արտադրող կամ մատակարար՝ տարածման համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով**

Գերմանական ընկերությունը փնտրում է մսի, խոզապուխտի, պանրի մակարոնեղենի եվրոպական արտադրող կամ մատակարար՝ երկարատև ժամկետով տարածման ծառայությունների համաձայնագրի համար: Ընկերությունը փնտրում է այն արտադրանքները, որոնք սովորաբար դուրս են նետվում կամ ոչնչացվում են սննդամթերք արտադրող ընկերությունների կողմից (օրինակ՝ վերջին կտորներ կամ ապրանքներ, որոնք «լավ է նախքան» ժամկետը ժամանակահատվածի ավարտից կարճ ժամանակ է մնում) դրանք մշակելու, և մանրածախ կետերում փոքր փաթեթներով վաճառելու համար: Ընկերությունը մասնակցել է Գերմանիայի կողմից ֆինասնավորվող մի քանի ծրագրերում՝ ռեսուրսների արդյունավետության և սննդի արտադրության ոլորտների հետ կապված:

**Լեհական արտադրողը փնտրում է առևտրի միջնորդավորված ծառայություններ**

Ընկերությունը Լեհաստանից մասնագիտացած է ողջ աշխարհում դիետիկ հավելումների և առողջարար սննդամթերքի առցանց վաճառքով: Ընկերությունը փնտրում է նոր արտադրանք՝ իրենց էքսկլյուզիվ արտադրական շարքը ամբողջական դարձնելու համար: Ընկերությունը ցանկանում է հաստատել առևտրային գործակալության և տարածման ծառայությունների համաձայնագրեր արտադրողների հետ: Նաև, ընկերությունը ցանկանում է համագործակցել դիետիկ հավելումների դիստրիբյուտորների հետ՝ հետագայում տարածման ծառայությունների տրամադրման նպատակով:

Ծածկագիր. BRPL20180425001

**Ընկերությունը փնտրում է ծառայությունների համաձայնագիր՝ եվրոպական ընկերության հետ սառեցված-չորացրած կեռասի փոշու արտադրության նպատակով**

Իսպանական ընկերությունը, որը մասնագիտացած է կոսմետիկայի և ֆունկցիոնալ սննդի արտադրության ոլորտում, կենտրոնացած է կեռասի հատկությունների կիրառման վրա: Ընկերությունը փնտրում է եվրոպական ընկերություն, որը մասնագիտացած է մրգերի լիոֆիլիզացիայի մեջ՝ հնարավորություն ունի տրամադրել չորացված-սառեցված կեռասի փոշի փաթեթների մեջ, և համագործակցել ծառայությունների մատուցման համաձայնագրի ներքո:

Ծածկագիր. BRES20171020001

**Տեքստիլ արտադրություն**



## Գործարար համագործակցության առաջարկներ

### Իսրայելյան ընկերությունը փնտրում է տարածման համաձայնագրեր

Իսրայելյան ընկերությունը, որը մասնագիտացած է տեքստիլի արտադրության և մարքեթինգի ոլորտում, հատկապես՝ սրբիչների ոլորտում, առաջարկում է ինստիտուցիոնալ շուկայի արտադրողականության համար սրբիչների նոր հոսքագիծ: Առավելությունները ներառում են՝ շքեղ զգացողության յուրահատուկ համադրությունը, անթերի ամրությունը, երկարակեցությունը. այն նաև զգալիորեն կրճատում է սրբիչի քաշը՝ նվազեցնելով լվացման ծախսերը: Ընկերությունը փնտրում է առևտրային գործակալության, տարածման ծառայությունների և ֆրանչայզի համաձայնագրեր:

Ծածկագիր. BOIL20180513001

### Վերնագրեատ արտադրող հունգարական ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ արտադրական և ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով

Հունգարական ընկերությունն առաջարկում է իր կարողությունները՝ արտադրական և ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո: ՓՄՁ-ն ցանկանում է համագործակցել ընկերությունների հետ, որոնք գործում են տեքստիլ արդյունաբերության ոլորտում և փնտրում են կարուձևի ընկերություններ՝ արտադրելու համար մեծածավալ քանակով հագուստ: Բացի հումքը և զարդանախշերը տրամադրելը, գործընկերը պետք է նաև արտադրված հագուստի վաճառք իրականացնի:

Ծածկագիր. BOHU20180523001

### Ընկերությունը, որն արտադրում է բարձրորակ վերաօգտագործվող բժշկական հագուստ և առողջապահության ոլորտում կիրառվող այլ հագուստ, փնտրում է ենթապայմանագրային ծառայություններ

Չեխական ընկերությունը, որն արտադրում և տարածում է բժշկական հագուստ և առողջապահության ոլորտում կիրառվող այլ հագուստ, բժշկական խալաթներ և անկողնային սպիտակեղեն, կամ արդյունաբերական լվացքատների ու վերջնական սպառողի համար՝ նախատեսված վարձով տեքստիլ, փնտրում է ենթապայմանագրային համագործակցություն՝ շուկաներում իր պորտֆելը ընդլայնելու նպատակով, ինչպես նաև առևտրային գործակալության համաձայնագրեր: Ընկերությունը պատրաստ է մուտք գործել նոր շուկաներ, իսկ ապրանքների պորտֆելը հարմար է ողջ աշխարհում գոյություն ունեցող հարմարանքների դեպքում:

Ծածկագիր. BOCZ20180411001

**Հարմարավետ գլամուրային հագուստ արտադրող ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ  
և/կամ գործակալներ**

Բելգիական ընկերությունը, որը մասնագիտացած է լյուքս դասի, դասական, հարմարավետ հագուստի արտադրության ոլորտում, փնտրում է երկարատև համագործակցություն՝ առևտրային գործակալության կամ տարածման համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BOBE20170111001

**Գործարար համագործակցության հարցումներ**

**Ընկերությունը, որն արտադրում է բարձրորակ բժշկական հագուստ և առողջապահության  
ուղորտում կիրառվող հագուստ, փնտրում է արտադրական գործընկերներ**

Բժշկական հագուստ և առողջապահական ոլորտում կիրառվող հագուստ, բժշկական խալաթներ և անկողնային սպիտակեղեն, կամ արդյունաբերական լվացքատների համար նախատեսված տեքստիլ արտադրող և տարածող չեխական ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ արտադրական համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով, ովքեր կարող են կատարել այս ընկերության արտադրական աշխատանքի մի մասը:

Ծածկագիր. BRCZ20180606001

**Լյուքս դասի մանկական հագուստի դիզայնով զբաղվող իռլանդական ընկերությունը  
մասնագիտացած է բարձրորակ բամբակյա, քաշմիրե հագուստի արտադրության ոլորտում և  
փնտրում է արտադրական համաձայնագրեր**

Այս ընկերությունը նոր իռլանդական լյուքս դասի մանկական հագուստի դիզայնով է զբաղվում և փնտրում է հագուստ արտադրող, որը պահպանում է աշխատանքն ավարտին հասցնելու բարձր ստանդարտները: Ընկերությունը նպատակ ունի հաստատել երկարատև արտադրական համաձայնագիր: Իդեալական գործընկեր կարող է լինել պատրաստի քաշմիրե/բամբակե կարդիգաններ, վերնաշապիկներ, սվիտերներ և զուգագուլպաներ արտադրողը, որոնք կարող են վերաբրենդավորվել կամ կարող են համալրվել:

Ծածկագիր. BRIE20170725001





## Գործարար համագործակցության առաջարկներ

### Ռումինական ճարտարապետական ստուդիան փնտրում է բիզնես գործընկերներ ենթապայմանագրային համաձայնագրերի համար

Ռումինական ընկերությունն իրականացնում է ճարտարապետական գործունեություն, որը հիմնականում բաղկացած է ճարտարապետական դիզայնից և շինարարության մանրամասն նախագծումից: Ընկերությունը փնտրում է բիզնես գործընկերներ, ովքեր հետաքրքրված են ճարտարապետական նախագծման ենթապայմանագրով: Գործընկերների միջև համագործակցությունը կլինի ենթապայմանագրային համաձայնագրի ներքո:

Ծածկագիր. [BORO20180521001](#)

### Հոլանդական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտոր գործընկերներ

Հոլանդական ՓՄՁ-ն տրամադրում է շենքերի, պատնեշների, կամուրջների, թունելների, երկաթուղիների, մեքենաների և սողանքների դեֆորմացիայի մոնիտորինգի համակարգ: Համակարգը գրանցում է թեքում (x,y) 100 հերցում մինչև 25 հազար աստիճան ճշգրտությամբ: Այն նաև գրանցում է տատանումը (x,y,z) մինչև 400 հերց: Ընկերությունը փնտրում է գործընկերներ, ինչպես օրինակ՝ ինժեներական ընկերություններ, անվտանգության խորհուրդներ և հետազոտական հնարավորություններ՝ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. [BONL20180507001](#)

### ՓՄՁ-ն, որը գործում է բետոնի վերանորոգման ոլորտում, փնտրում է միջազգային գործընկերներ՝ ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով

Գերմանական ՓՄՁ-ն առաջարկում է վերանորոգել ճաքերի կամ կոռոզիայի հետևանքով առաջացած բետոնե կառուցվածքների մասերը կամ ենթակառուցվածքային հարմարությունները՝ կիրառելով ժամանակակից վերանորոգման գործընթացներ, ինչպես



---

օրինակ՝ ցեմենտի հիմքով կախոցների և խեժերի ներարկումը: Առաջարկվող վերանորոգման աշխատանքները կատարվում են Գերմանական բետոնի և շինարարական ինժեներական Ասոցիացիայի սերտիֆիկատի հիման վրա: ՓՄՁ-ն փնտրում է ենթապայմանագրային և արտադրական համաձայնագրեր՝ շինարարության ոլորտից գործընկերների հետ:

**Ծածկագիր. BODE2018062100**

---

**Թուրքական ընկերությունը, որը մշակում է բնական քարեր շինությունների համար, փնտրում է դիստրիբյուտորներ**

Թուրքական ընկերությունը, որը մշակում է բնական քարեր շինարարության ոլորտի համար, փնտրում է դիստրիբյուտորներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով:

**Ծածկագիր. BOTR20180620001**

---

**Ռետինե, ռետինե-մետաղական և պողպատե կառուցվածքներ արտադրող լեհական ընկերությունը փնտրում է արտադրական և ենթապայմանագրային համագործակցություն**

Մեքենաների, ավտոմատացման ոլորտի սարքավորումների, արտադրության երկաթուղային տրանսպորտի, գյուղատնտեսական և շինարարական մեքենաների համար ռետինե, ռետինե-մետաղական և պողպատե կառուցվածքներ արտադրող լեհական ընկերությունը, որը նաև արտադրում է պողպատե կառուցվածքներ, փնտրում է արտադրական և ենթապայմանագրային հնարավորություններ:

**Ծածկագիր. BOPL20170613003**

---

## **Գործարար համագործակցության հարցումներ**

---

**Պ ՓՄՁ-ն փնտրում է գործընկեր աուստրալիացային կամ արտադրական համաձայնագրի ներքո՝ Աերոգել տեխնոլոգիայի վրա հիմնված բարձր որակով մեկուսացման գործընթացի առևտրականացման համար**

Շոտլանդական (Միացյալ Թագավորություն) ՓՄՁ-ն, որը գործում է շինարարության ոլորտում, փնտրում է գործընկեր՝ աերոգելի մեկուսիչը կարճ մանրաթելերի վերածելու գործընթացի առևտրականացման համար: Կան հիմնական նյութի հետ կապված մարտահրավերներ, որոնք պետք է հաղթահարվեն, ուստի փորձագետների հետ կտրվող հղկանյութի, փոշոտ նյութերի հարցերը քննարկելն առաջնահերթություն է: Ակնկալվող համագործակցությունը կլինի աուստրալիացային կամ արտադրական համաձայնագրերի

ներքո:

Ծածկագիր. BRUK20180411001

**Ֆրանսիական ՓՄՁ-ն, որը երեսպատում է գետնի փափուկ գորգերը, փնտրում է ռետինե հատիկների մատակարարներ**

Ֆրանսիական ՓՄՁ-ն նախագծում և արտադրում է մանկական սպորտային խաղահրապարակներ էքստերիերի համար՝ պատրաստված գետնի համար նախատեսված փափուկ գորգերից, կիրառելով էթիլեն պրոպիլենի դիեն մոնոմեր ռետինի (EPDM) հատիկներ: Ընկերությունը փնտրում է հատիկների նոր մատակարարներ, դրանց՝ շրջակա միջավայրի վրա ցածր ազդեցության լիարժեք երաշխավորմամբ: Ընկերությունը հետաքրքրված է աուստրալիացային համագործակցությամբ:

Ծածկագիր. BRFR20180515001

## R&D



**H2020-SC3-RES-1-2019. Ֆոտոգալվանային, էլեկտրական և սենսորային սարքերի արտադրության ոլորտում փորձ ունեցող ընկերություններ են որոնվում**

Ֆրանսիական համալսարանը հանդես կգա իբրև համակարգող եվրոպական ծրագրի համար, որի նպատակն է նոր մոտեցումներ մշակել էլեկտրական սարքավորումների արտադրության համար: Կոնսորցիումը գտել է 2 համապատասխան մրցույթ՝ LC-SC3-RES-1-2019 և LC-NMNP-32-2019 ծրագրերն իրականացնելու համար: Ընկերությունը փնտրում է արդյունաբերական գործընկերներ, ովքեր գործում են կիսահաղորդիչների/սենսորների/ֆոտոգալվանային արտադրանքի (PV) ոլորտում՝ կոնսորցիումը համալրելու նպատակով:

Ծածկագիր. RDFR20180219001

**Հորիզոն 2020 ՓՄՁ գործիք, 2-րդ փուլ: Էլեկտրական ցանցերը կամ էլեկտրաէներգիայի մատակարարման ոլորտի ընկերությունները փնտրում են ծրագիր՝ էներգաարդյունավետության**

## տեղեկատվական հարթակի համար

Իսպանական ընկերությունը, որը գործում է էներգաարդյունավետության ոլորտում, ծրագրի առաջարկ է պատրաստում Հորիզոն 2020 ծրագրի ներքո գործող ՓՄՁ գործիքի 2-րդ փուլի համար: Այս ծրագրի նպատակն է ստեղծել լուծում մեծաքանակ տվյալների համար՝ էլեկտրականության ոլորտի հաճախորդներին համապատասխան տեղեկատվություն ստանալու նպատակով: Փնտրվում են գործընկերներ, ովքեր առավել լավ կհասկանան հաշիվ ապրանքագրերից և կստանան առաջարկություններ էներգախնայողության համար, ինչպես նաև՝ ցանցերին, ովքեր առավել լավ կգիտակցեն իրենց հաճախորդների կարիքները: Էլեկտրաէներգիա արտադրողներ և դիստրիբյուտորներ են որոնվում, ովքեր կթեստավորեն այս ծրագիրը:

Ծածկագիր. RDES20180705001

## Տեղեկատվական տեխնոլոգիաներ



## Գործարար համագործակցության առաջարկներ

Ընկերությունն առաջարկում է հետազոտական և մշակման ծառայություններ՝ կիրառելով բաց կոդով տեխնոլոգիաներ աութորսինգային համաձայնագրերի ներքո

Ընկերությունը Բոսնիա-Հերցեգովինայից, որը գործում է գիտահետազոտական ճյուղի ծրագրերի ոլորտում՝ կիրառելով բաց կոդերով S2S տեխնոլոգիաներ, առաջարկում է վեր, բջջային և համակարգչային ծրագրեր և փնտրում է երկարատև համագործակցություն աութորսինգային կամ համատեղ ձեռնարկության համաձայնագրերի ներքո՝ հատկապես հետազոտական բաղադրիչ պահանջող ծրագրերի համար:

**Հատուկ մասնագիտացված ծրագիր, մասնավորապես՝ տեքստիլի, կարուձևի ու կոշիկեղենի ոլորտում, որն առաջարկվում է առևտրային գործակալության համաձայնագրի ներքո համագործակցությամբ**

Պորտուգալական ընկերությունը, որը գործում է Ձեռնարկությունների ռեսուրսների պլանավորման (ERP) լուծումներում՝ տեքստիլի, կարուձևի, կոշիկեղենի ոլորտների համար, առաջարկում է ծրագիրը եվրոպական հնարավոր շահառուներին: Ընկերությունը փնտրում է առևտրային գործակալության համաձայնագրեր այն գործընկերների հետ, ովքեր ունեն համապատասխան գիտելիքներ՝ տեղեկտավական համակարգերի և տեխնոլոգիաների ոլորտում: Ծրագիրը հնարավորություն է տալիս կառավարել արտադրական գործընթացը, աշխատակազմը և սարքավորումները՝ արդյունաբերական պլանավորման ընթացքում:

Ծածկագիր. BOPT20170707001

**Լեհական ծրագրեր մշակող ընկերությունը փնտրում է աութօրսինգային կամ ծառայությունների մատուցման համաձայնագրեր**

Լեհական SS ընկերությունը փնտրում է երկարատև, միջազգային համագործակցություն: Ընկերությունը մասնագիտացած է պատվերով ծրագրերի մշակման, SS մասնագետների աութօրսինգի, նույնականացման և մուտքի կառավարման համակարգերի, Salesforce-ի վրա հիմնված ծրագրերի ոլորտում: Ակնկալվող համագործակցությունը պետք է լինի կամ ծառայությունների կամ աութօրսինգային համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BOPL20180608004

**Ընկերությունը, որն արտադրում է օդի որակի ստուգման մոնիթորինգային բնապահպանական համակարգեր, փնտրում է դիստրիբյուտորներ և գործակալներ**

Ռումինական SS և հեռահաղորդակցության ոլորտի ընկերությունը մշակել է մի շարք բնապահպանական մոնիթորինգային համակարգեր՝ օդի որակի ստուգման համար: Ընկերության նորարարական լուծումները զգալիորեն նպաստում են առողջ միջավայրին, ինչպես նաև ներսի և դրսի օդի որակի վերահսկման մոնիթորինգին: Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ կամ առևտրային գործակալներ՝ բնապահպանական ոլորտից:

Ծածկագիր. BORO20180415001

## Գործարար համագործակցության հարցումներ

**SS վերանորոգման ոլորտում գործող ընկերությունը փնտրում է միանման կամ լրացուցիչ ծառայություններ կամ ապրանքներ մրցակցային առավելություններով՝ դրանք հունական շուկայում ներկայացնելու նպատակով:**

SS վերանորոգման ոլորտում գործող փոքր հունական ընկերությունը փնտրում է շուկայական նոր հնարավորություններ: Ընկերությունը ցանկանում է ներկայացնել նոր ծառայություններ կամ ապրանքներ SS ոլորտի հետ կապված, ինչպես նաև համագործակցել նման ընկերությունների հետ՝ տրամադրելով վերանորոգման ծառայություններ: Ծառայությունների կամ ապրանքների տեսականին բավականաչափ լայն է, որպեսզի ներառի առաջարկներ, հատկապես եթե առաջարկներն ունենան հստակ շուկայական առավելություն: Ընկերությունը փնտրում է տարածման ծառայությունների համաձայնագրեր:

Ծածկագիր. BRGR20180530001

**Ընկերությունը փնտրում է նոր գործընկերներ, առաջարկում է լուծումներ գյուղատնտեսության և ջրային ցանցերի համար՝ առևտրային գործակալության համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով:**

Պորտուգալական ՓՄՁ-ն, որը 10 տարվա փորձ ունի վերջնական օգտագործողին/ներդրողին տեխնիկական վերլուծության, նախագծման, խորհրդատվական ծառայությունների տրամադրման ոլորտում, ինչպես նաև՝ էներգաարդյունավետության և ջրային ցանցերի ծրագրերի իրականացման մեջ, փնտրում է նորարարական ապրանքներ (հսկողության սարքավորումներ և ծրագրեր, սենսորներ ու հաշվիչ սարքեր)՝ դրանք իր կողմից առաջարկվող պորտֆելում ավելացնելու նպատակով: Ընկերությունը փնտրում է ֆիզիկական անձեր՝ առևտրային գործակալության համաձայնագիր կնքելու նպատակով:

Ծածկագիր. BRPT20180205001

## Կոսմետիկա



## Գործարար համագործակցության առաջարկներ

### Կոսմետոլոգիական գործիքներ և արքեսուարներ արտադրող լեհական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Լեհական ընկերությունը, որն արտադրում է բնական նյութերից (փայտ, կվարց, ռետին) պատրաստված կոսմետոլոգիական գործիքներ և արքեսուարներ, բնական կոսմետիկայի ոլորտում փնտրում է դիստրիբյուտորներ՝ պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների համար:

Ծածկագիր. BOPL20161115002

### Ընկերությունն առաջարկում է հակաբիոտիկ պեպտիդ, բնական կոնսերվանտ կոսմետիկայի համար, որը ստացվում է լակտոֆերիցին H-ից, տարածման ծառայությունների ներքո համագործակցելու նպատակով:

Մանրէաբանություն-ֆերմենտացիայի ոլորտում գործող կորեական ընկերությունն առաջարկում է լակտոֆերիցին H, որը հակաբիոտիկ պեպտիդ է՝ բաղկացած 12 ամինաթթուներից: Այն կարող է կիրառվել որպես բնական կոնսերվանտ կոսմետիկայի համար և ապահով է մարդու մաշկի համար՝ առանց կողմնակի ազդեցությունների:

Ծածկագիր. BOKR20180608001

### Մաշկի համար նախատեսված կոսմետիկա արտադրող թուրքական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ, գործակալներ և առաջարկում է արտադրական համաձայնագրեր

Թուրքական ՓՄՁ-ն մաշկի համար նախատեսված կոսմետիկայի, բժշկական սարքավորումների արտադրությամբ և վաճառքով զբաղվող ընկերություն է, որն ունի կանխարգելիչ առողջապահության վրա հիմնվող արտադրական հոսքագիծ: Ապրանքներն օգտագործվում են երեխայի և մոր խնամքի, մաշկի, մազերի, անձնական և բժշկական խնամքի նպատակով և օգտակար են մարմնի պաշտպանության և մաքրման համար, ինչպես նաև պահպանում են մարմնի հավասարակշռությունը: Ընկերությունը փնտրում է առևտրային գործակալներ և դիստրիբյուտորներ, ինչպես նաև՝ առաջարկում է սերտիֆիկացված և հուսալի արտադրական հարմարություններ այն ընկերություններին, որոնք ունեն դրա կարիքը:

Ծածկագիր. BOTR20180517001

## Դեղագործություն



## Գործարար համագործակցության առաջարկներ

### Իտալական ընկերությունը փնտրում է գործակալներ և դիստրիբյուտորներ

Իտալական ընկերությունը, որը զբաղվում է դեղագործական ապրանքների առևտրով, մշակել է քրքումի վրա հիմնված սննդային հավելումներ՝ օգտագործելով հատուկ բաղադրություն, որը հնարավորություն է տալիս առավելագույնի հասցնել քրքումին նյութի կենսաբանական մատչելիությունը: Ընկերությունը փնտրում է առևտրային գործակալության և տարածման ծառայությունների համաձայնագրեր:

Ծածկագիր. BOIT20180510002

### Հոլանդական ՓՄՁ-ն առաջարկում է եզակի դասընթացների հնարավորություն՝ դրանց կարիքն ունեցող ընկերություններին

Հոլանդական ՓՄՁ-ն մասնագիտացած է (կենսա-) դեղագործական Պատշաճ արտադրական գործունեության (GMP) մեջ և առաջարկում է իր եզակի դասընթացային հնարավորությունները: Այդ հնարավորությունները և դասընթացային ծրագիրը նախագծված են (կենսա-) դեղագործական, կենսատեխնոլոգիական և բնական գիտությունների ոլորտների ընկերությունների համար, որոնք ունեն օգնության կամ GMP դասընթացի կարիք (կենսա-) դեղագործական արտադրության ցանկացած ասպեկտում GMP-ին համապատասխան: Գործընկերների հետ համագործակցությունը կլինի ծառայությունների մատուցման համաձայնագրի ներքո:

Ծածկագիր. BONL20180111001

Ընկերությունը, որը մասնագիտացած է բժշկական սարքավորումների արտադրության ոլորտում, փնտրում է գործընկերներ



Ռուսական ընկերությունը, որն արտադրում է սարքավորումներ եվրոֆիզիոլոգիայի, պոլիսոմնոգրաֆիայի, կենսաբանական հետադարձ կապի և հետազոտական նպատակների համար, փնտրում է օտարերկրյա գործընկերներ՝ ծառայությունների մատուցման համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BORU20180130003

## Գործարար համագործակցության հարցումներ

**Լեհական ներմուծողը, որը մասնագիտացած է դիետիկ հավելումների առցանց վաճառքի բնագավառում, փնտրում է առևտրի միջնորդավորված ծառայություններ**

Ընկերությունը Լեհաստանից, որը մասնագիտացած է ամբողջ աշխարհից ստացվող դիետիկ հավելումների և առողջարար սննդամթերքի առցանց վաճառքի բնագավառում, փնտրում է նոր ապրանքներ, որոնք կլրացնեն իրենց էքսկլյուզիվ արտադրական հոսքագիծը: Ընկերությունը ցանկանում է հաստատել առևտրային գործակալության և տարածման ծառայությունների համաձայնագրեր՝ արտադրողների հետ: Ընկերությունը նաև ցանկանում է համագործակցել դիետիկ սննդամթերքի դիստրիբյուտորների հետ՝ հետագայում տարածման ծառայություններ մատուցելու նպատակով:

Ծածկագիր. BRPL20180425001

**Շվեդական էկոլոգիապես մաքուր կանացի հիգիենայի ոլորտում գործող սկսնակ ՓՄՁ-ն փնտրում է արտադրական համաձայնագիր Եվրոպայում**

Շվեդական սկսնակ ընկերությունը փնտրում է սանիտարական անձեռոցիկներ արտադրողներ: Ընկերությունը ցանկանում է հաստատել արտադրական համաձայնագրեր շրջակա միջավայրի վրա առավել քիչ ազդեցություն ունեցող արտադրանքի համար, ինչպես օրինակ՝ կենսաքայքայիչ նյութից կամ ոչ պլաստիկ բաղադրիչից արտադրանքը: Առաքման ժամկետը պետք է լինի 1-3 ամիս պատվերից հետո: Նաև պետք է հնարավորություն լինի տպագրելու ընկերության ձևավորումը փաթեթավորման վրա (մասնավոր պիտակով):

Ծածկագիր. BRSE20180112001

## Այլ ոլորտներ



## Գործարար համագործակցության առաջարկներ

### Մանկական արքեսուարներ արտադրող ընկերությունը փնտրում է գործակալներ և դիստրիբյուտորներ

Ընկերությունը Պորտուգալիայից, որն արտադրում է մանկապարտեզների և երեխաների համար նախատեսված արքեսուարներ, փնտրում է գործակալներ և դիստրիբյուտորներ այլ երկրներում:

Ծածկագիր. BOPT20180612002

### Ձեռագործ, ենթակեղևից պատրաստված գորգերի պորտուգալական դիզայները փնտրում է մանրածախ և մեծածախ վաճառք Եվրոպայում:

Պորտուգալիայում հիմնված ընկերությունը նախագծում և արտադրում է ձեռագործ, ենթակեղևից պատրաստված գորգեր՝ հյուրանոցների և բնակելի նախագծերի համար: Այն առաջարկում է գույների համապարփակ շարք և ավելացնում է պատվերի յուրահատկությունը՝ ստեղծելով գրավիչ տարածություն և հագեցվածություն: Այն այժմ ցանկանում է ընդլայնել իր վաճառքը՝ համալրելով վաճառքի ցանցը Եվրոպայում՝ տարածման և առևտրային ծառայությունների համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BOPT20180530001

### Փաթեթավորման սարքավորումներ արտադրող թուրքական ընկերությունը փնտրում է առևտրային գործակալություններ և դիստրիբյուտորներ

Թուրքական արտադրողը գտնվում է Ադանայում/Թուրքիա: Ընկերությունը փոքր, սակայն աստիճանաբար զարգացող բիզնես է: Արտադրողն առաջարկում է ամբողջական լուծումներ տարբեր չափի և ոճի, որը հնարավորություն է տալիս բավարարել գրեթե բոլոր կարիքները: Արտադրանքը համապատասխանում է բոլոր թուրքական և եվրոպական ստանդարտներին: Ընկերությունը Ցանցի ներսում փնտրում է առևտրային գործակալության և տարածման համաձայնագրեր եվրոպական և ոչ եվրոպական երկրների հետ:

Ծածկագիր. BOTR20180611001

Կաթնամթերքի փաթեթավորման արտադրության ոլորտում գործող ընկերությունը փնտրում է

**տարածման և առևտրային գործակալության ոլորտի գործընկերներ, նաև ցանկանում է հանդես գալ արտադրական համաձայնագրերի ներքո**

Բուլղարական ՓՄՁ-ն մասնագիտացած է կաթնամթերքի արդյունաբերության համար փաթեթավորման արտադրությամբ, ինչպիսիք են՝ այլումինե փայլաթիթեղը, այլումինե փայլաթիթեղի կափարիչը, պոլիստիրոլից յոգուրտի տարաները, թարմ կաթի համար պոլիէթիլենային փաթեթները և այլն: Ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ առևտրային գործակալության, տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո, ինչպես նաև այն պատրաստ է համագործակցել արտադրական համաձայնագրերի ներքո:

**Ծածկագիր. BOBG20180418001**

**Ընկերությունը, որը մասնագիտացած է հացահատիկի, լոբազգիների և ձիթապտղային կուլտուրաների ոլորտում, փնտրում է առևտրի միջնորդներ:**

Ռումինական ընկերությունը, որը գործում է բույսերի մշակման ոլորտում, մասնագիտացած է հացահատիկի, լոբազգիների և ձիթապտուղների աճեցման ոլորտում: Ընկերությունը փնտրում է առևտրի միջնորդներ՝ տարածման կամ առևտրային գործակալության ծառայությունների համաձայնագրեր կնքելու նպատակով:

**Ծածկագիր. BORO20180516001**

**Բուլղարական ՓՄՁ-ն առաջարկում է համատեղ ձեռնարկություն և ֆինանսական համաձայնագրեր**

Բուլղարական սկսնակ ընկերությունը, որը մասնագիտացած է առևտրի և գովազդի ոլորտում, մշակել է «պատրաստիք ինքը» օժանդակ: Արտադրանքն առաջարկվում է տարբեր տուփերով և գունային պարկուճներով՝ հաճախորդի նախասիրությամբ: Ընկերությունն առաջարկում է պատենտավորված նորարարական արտադրանք և փնտրում է գործընկերներ՝ համատեղ ձեռնարկության կամ ֆինանսական համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

**Ծածկագիր. BOBG20180521001**

---

## **Գործարար համագործակցության հարցումներ**

---

**Ընկերությունն առաջարկում է համագործակցություն առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո**

Լեհական ընկերությունը, որը գործում է իբրև առևտրային գործակալ, առաջարկում է ծառայություններ օտարերկրյա ընկերություններին, ովքեր ցանկանում են մուտք գործել

լեհական շուկա իրենց արտադրանքով: Այն կարող է աջակցել ցանկացած ոլորտի ձեռնարկատիրոջ: Ընկերությունն առաջարկում է համագործակցություն առևտրային գործակալության համաձայնագրի ներքո:

Ծածկագիր. BRPL20170926002

**Ընկերությունը փնտրում է համագործակցություն համատեղ ձեռնարկության և/կամ փոխհամալրող արտադրանքի համաձայնագրի ներքո**

Ընկերությունը Լեհաստանի հարավ-արևմուտքից, իր սեփական արտադրական տարածքներով և հոսքագծերով, փնտրում է բջջանյութ (ցելյուլոզա) արտադրողներ, ովքեր հետաքրքրված են արտադրություն սկսել Լեհաստանում: Ընկերությունը փնտրում է համագործակցություն՝ համատեղ ձեռնարկության և/կամ փոխհամալրող արտադրանքի համաձայնագրի ներքո:


Ծածկագիր. BRPL20161221003

**Զարդեր արտադրող Եվրոպական դիզայները փնտրում է չժանգոտվող պողպատից պատվերով զարդեր արտադրողներ՝ արտադրական համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով**

Ֆիննական դիզայները, որը մասնագիտացած է զարդերի դիզայնի ոլորտում, փնտրում է պատվերով չժանգոտող պողպատից զարդեր արտադրողներ Եվրոպայում, ովքեր կարտադրեն ականջօղեր, ապարանջաններ և վզնոցներ ֆիննական դիզայների կողմից տրամադրված դիզայնով՝ արտադրական համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BRFI201705260

# Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ



## Տեխնոլոգիական համագործակցության առաջարկներ

### Հոլանդական տեխնոլոգիական ընկերությունն առաջարկում է ամենաարագ և առավել զգայուն ֆոտոնային դետեկտորները շուկայում

Հոլանդական ՓՄՁ-ն առաջարկում է բազմալիք եզակի ֆոտոնի հայտնաբերման համակարգ՝ բարձր արդյունավետությամբ և նմանը չունեցող ժամային կարգավորմամբ: Ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ տեխնոլոգիան իրենց հետազոտական և զարգացման ուղղված սարքավորման մեջ ինտեգրելու նպատակով: Ընկերությունն առաջարկում է հաճախորդի պատվերով համապատասխանեցում և փնտրում է համագործակցություն առևտրային համաձայնագրերի ներքո՝ տեխնիկական աջակցությամբ:

Ծածկագիր. TONL20180531001

### Նոր դեղեր քրոնիկ վերքերի բուժման համար

Շվեդական կենսատեխնոլոգիական ընկերության առաջնահերթությունն է՝ չբուժվող վերքերի համար վերքի տեղային արյան հոսքի շատացման և արյան շրջանառության խախտումը վերացնող դեղի մշակումը: Մշակման մեջ գտնվող միացությունն ունի ազդեցության եզակի գործունեություն և վերքերի բուժման աննախադեպ արդյունավետություն: ՓՄՁ-ն փնտրում է դեղագործական ընկերություններ լիցենզավորման կամ ֆինանսական համաձայնագրերի համար և համալսարաններ՝ հետազոտական համագործակցության, լրացուցիչ կոնցեպտուալ ապացույցների և կենդանիների վրա փորձարկման վավերացման նպատակով:

Ծածկագիր. TOCH20180703001

## Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ

**Փնտրվում է քիմիական արդյունաբերության նոու-հաու՝ հումքի համար նախատեսված թվային շուկայի մշակման նպատակով**

Գերմանական սկսնակ ընկերությունը ստեղծել է թվային շուկա, որը միավորում է տարբեր ոլորտների և տարբեր չափերի մատակարար և գնորդ ընկերություններին հումքի համար նախատեսված հարթակում: Հարթակն ամբողջովին անկախ է քիմիական նյութեր արտադրողներից ու առևտրականներից: Նոր ծառայություններն ու դրանց ֆունկցիաները ներկայացնելու, ինչպես նաև հարթակի հետագա մշակման համար ընկերությունը փնտրում է նոու-հաուի իմացությամբ գործընկերներ, որոնք փորձ և կոնտակտներ ունեն քիմիական արդյունաբերության ոլորտում: Գործընկերները որոնվում են տեխնիկական համագործակցության համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

**Ծածկագիր. TRDE20180530001**

**Միացյալ Թագավորությունում գտնվող ՓՄՁ-ն փնտրում է նոր, վաղ փուլերի մոլեկուլներ, որոնք գործում են ընդդեմ ֆիբրոզների**

Դեղագործական ՓՄՁ-ն Միացյալ Թագավորությունից փնտրում է նոր փոքր մոլեկուլներ, որոնք գործում են ֆիբրոզ առաջացնող մոլեկուլային գործընթացների դեմ: ՓՄՁ-ն կմշակի այս նոր միացությունները՝ բարելավելով դրանց արդյունավետությունը և անվտանգության պրոֆիլները՝ նպատակ ունենալով խոշոր դեղագործական ընկերությունների կողմից լիցենզավորել բարելավված մոլեկուլները դրանք շուկայահանելու նպատակով: Ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ համալսարանների, հետազոտական ընկերությունների և ընկերությունների շրջանում լիցենզային կամ տեխնիկական համագործակցության համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

**Ծածկագիր. TRUK20180404002**

## Եվրոպական նորություններ և միջոցառումներ

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում կազակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործարարներին հանդիպելու հավանական գործընկերների հետ և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ եվրոպական շուկա մուտք գործելու համար:

Ստորև ներկայացվում են 2018 թ. -ի օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր ամսիսների ընթացքում կազմակերպվող միջոցառումները:

### Օգոստոս

21/08/2018	<p><b>gamesmatch@gamescom 2018 – Խաղային արդյունաբերության ոլորտին ուղղված համագործակցության հաստատման միջոցառում</b></p> <p><b>Քյոլն (Գերմանիա)</b></p> <p>Այս միջոցառման ընթացքում ընկերությունները կներակայացնեն վերջին շրջանի իրենց արտադրանքն ու թողարկումները, ինչպես նաև կփնտրեն նոր ծրագրեր և գործընկերներ:</p> <p><a href="https://gamesmatchgamescom2018.b2match.io/">https://gamesmatchgamescom2018.b2match.io/</a></p>
------------	--



27/08/2018	<p><b>"Nanotechnology and nanomaterials" NANO-2018</b></p> <p><b>Կին (Ուկրաինա)</b></p> <p>Կոնֆերանսն ուղված է նանո-գիտության և նանոտեխնոլոգիաների վերջին նվաճումներին և խթանում է խորքային գիտական քննարկումները գիտնականների և հետազոտողների միջև, որոնք ներկայացնում են տարբեր ոլորտները և տարբեր երկրները:</p> <p><a href="http://nano-conference.iop.kiev.ua/en/">http://nano-conference.iop.kiev.ua/en/</a></p>
------------	---

**Մեպտեմբեր**

13/09/2018	<p><b>Successful in Slovenia 2018</b></p> <p><b>(Սլովենիա)</b></p> <p>Այս միջոցառման հիմնական թեմաներն են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- Վերականգնվող էներգիայի աղբյուրներ</li> <li>- Շրջակա միջավայր</li> <li>- Մետաղագործություն</li> <li>- Շինարարություն</li> <li>- Փայտամշակում</li> <li>- Էլեկտրական արդյունաբերություն</li> <li>- Պլաստիկ</li> <li>- Լոգիստիկա:</li> </ul> <p><a href="https://slovenia2018.b2match.io/">https://slovenia2018.b2match.io/</a></p>	<b>Մեջե</b>
------------	---	-------------

20/09/2018	<p><b>Food for Change B2B, Salone del Gusto 2018</b> <span style="float: right;"><b>Թուրին</b></span></p> <p><b>(Բուսալիա)</b></p> <p>Այս միջոցառման ընթացքում կազմակերպիչները համագործակցում են Slow Food միջազգային ասոցիացիայի հետ և կապեր հաստատում ընկերությունների, համալսարանների և գիտահետազոտական ինստիտուտների միջև, որոնք ներկայացնում են գյուղմթերքի ոլորտը:</p> <p><a href="https://gusto2018.b2match.io/">https://gusto2018.b2match.io/</a></p>
21/09/2018	<p><b>International Brokerage event at construction fair FOR ARCH 2018</b></p> <p><b>Պրահա (Չեխիա)</b></p> <p>Համագործակցության հաստատման այս միջոցառումն ընդգրկում է շինարարության բոլոր ոլորտները, ինչպես օրինակ՝ .Ճարտարապետական, նախագծային, շինարարական ինժեներիայի ծառայություններ, .Շինությունների կառուցապատում, .Շինմոնտաժային աշխատանքներ, .Էլեկտրամոնտաժ, .Շինարարական նյութեր, .Պատուհանների արտադրություն, դռներ և աստիճաններ, .Ջեռուցման, ծխնելույզի կառուցվածքներ, .Տրանսպորտ և լոգիստիկա, .Մշակութային ժառանգություն, .Սպիկապատում, Աղյուսապատում, .Հատակներ, տանիքներ, ներկում, .Կայուն շինություններ և Կանաչ շինություններ, .Այլ:</p> <p><a href="http://forarch2018.talkb2b.net/">http://forarch2018.talkb2b.net/</a></p>

**Հոկտեմբեր**

03/10/2018	<p><b>Open4Business 2018 International Conference and Matchmaking Event</b></p> <p><b>Պեչ (Հունգարիա)</b></p> <p>Այս տարվա կոնֆերանսը և համագործակցության հաստատման միջոցառումները հիմնականում կենտրոնացած են մեքենաշինության, միջազգային ծրագրերի վրա՝ կլաստերների համագործակցություն, կրեատիվ արդյունաբերություններ, կանանց ձեռնարկատիրություն և S2S:</p>
------------	---

	<a href="https://open4business2018.b2match.io/">https://open4business2018.b2match.io/</a>
11/10/2018	<p><b>Matchmaking event for startups, investors and industry at the RuhrSummit 2018</b></p> <p><b>Բոխում (Գերմանիա)</b></p> <p>Հոկտեմբերի 11-12-ից հրավիրվում են սկսնակներ, ներդրողներ և արդյունաբերական ընկերություններ՝ մասնակցելու նախապես պլանավորված 15 րոպեանոց համագործակցության հաստատման հանդիպումներին համագործակցության հաստատմանը նվիրված հարթակում: Դուք ընդամենը պետք է գրանցվեք, ներկայացնեք Ձեզ և Ձեր ընկերությունը օնլայն և նախապես ընտրեք Ձեզ հետաքրքրող գործընկերներ միջոցառման համար:</p> <p>Սկսկնակները կարող են դիմել անվճար:</p> <p><a href="https://rs2018.b2match.io">https://rs2018.b2match.io</a></p>
16/10/2018	<p><b>IoT (Internet of things) Solutions World Congress 2018 - Brokerage event</b></p> <p><b>Բոխում (Գերմանիա)</b></p> <p>IoTSWC18-ը կենտրոնացած կլինի 7 ոլորտների վրա՝ արտադրություն, առողջապահություն, էներգիա և սպասարկող ծառայություններ, շինարարություն և ենթակառուցվածքներ, բաց արդյունաբերություն, IOT-ի գործարկում, բլոկչեյն և արհեստական ինտելեկտ:</p> <p><a href="http://www.b2fair.com/iot2018">http://www.b2fair.com/iot2018</a></p>
17/10/2018	<p><b>Brokerage event during Expo-Russia Armenia 2018</b></p> <p><b>Երևան (Հայաստան)</b></p> <p>Միջոցառման թիրախ հանդիսացող ոլորտներն են՝</p>

	<ul style="list-style-type: none"> <li>• Էներգիա</li> <li>• Մեքենաներ, մետաղագործություն,</li> <li>• Սարքավորումներ</li> <li>• Տրանսպորտ և լոգիստիկա</li> <li>• Երկրաբանություն և հանքարդյունաբերություն</li> <li>• Շինարարություն</li> <li>• Քիմիական արդյունաբերություն</li> <li>• Հեռահաղորդակցություն</li> <li>• Տեղեկատվական տեխնոլոգիաներ</li> <li>• Նորարարություն և ներդրումներ</li> <li>• Բանկեր և ապահովագրական ընկերություններ</li> <li>• Գյուղատնտեսություն և սննդամթերք</li> <li>• Բժշկություն</li> <li>• Կրթություն:</li> </ul> <p><a href="http://ruitc.ru/en/">http://ruitc.ru/en/</a></p>
--	--

21/10/2018	<p><b>SIAL 2018 - Meet buyers</b></p> <p><b>Փարիզ (Ֆրանսիա)</b></p> <p>Բոլոր տիպի սննդատեսակները՝ սկսած բաղադրիչներից, վերջացրած սարքավորումներով ու վերջնական արտադրանքով, ցուցադրված կլինեն այս ցուցահանդեսին ներկայացված 21 ոլորտներում: Միջոցառմանը կկազմակերպվեն դեմ առ դեմ հանդիպումներ գնող-արտադրողների միջև, որը հիմնված կլինի միջազգային գնորդների պահանջների վրա: Ողջ Եվրոպայի արտադրողները կգան Փարիզ ցուցադրելու իրենց արտադրանքը և ներկա լինելու նախապես պլանավորված հանդիպումներին: Այս նոր տիպի միջոցառումը Ձեռնարկությունների եվրոպական ցանցի նախաձեռնություն է, որի նպատակն է կապել սննդի ոլորտի գնորդներին և արտադրողներին:</p> <p><a href="https://b2bsialparis2018.converve.io">https://b2bsialparis2018.converve.io</a></p>
------------	---

Վերոհիշյալ միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել ՁեՅ Հայաստան:

**Նշում:** *Եթե Դուք փնտրում եք գործընկեր արտասահմանում կամ նոր շուկա՝ և ցանկություն ունեք ներգրավվել ցանցի տվյալների բազայում, խնդրում ենք դիմել Ձեռնարկությունների եվրոպական ցանց Հայաստան՝ համագործակցության հայտաձևեր և այլ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:*

*Հարգելի գործարար,*

*Գրանցվեք հետևյալ հղմամբ՝*

*<http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Customer/Create?shid=32db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799> և ստացեք անվճար*

*հաղորդագրություններ Ձեր էլեկտրոնային փոստին նոր գրանցված բիզնես առաջարկների, միջազգային միջոցառումների վերաբերյալ:*

*Մատուցվող բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունն անվճար են:*

Այս տեղեկաթերթի մեջ տեսակետները պատկանում են հեղինակին և պարտադիր չէ, որ արտահայտեն Փոքր և միջին ձեռնարկությունների գործադիր գործակալության, Եվրոպական Հանձնաժողովի կամ այլ Եվրոպական կառույցների տեսակետը: Փոքր և միջին ձեռնարկությունների գործադիր գործակալությունը, Եվրոպական Հանձնաժողովը կամ դրանց կողմից գործող որևէ անձ պատասխանատու չէ տեղեկաթերթում պարունակվող բովանդակությունն օգտագործվելու դեպքում: